



06.07.2013

Երեբունի ամրոցի միջնաբերդում 2008թ.-ից իրականացվող հայ-ֆրանսիական գիտատեխնիկական համագործակցության շրջանակում ս. թ. հուլիսի 2-ից մեկնարկել է 2013թ. պեղումների գործաշրջանը: Պեղումները կընթանան Խալդիի տաճարից դեպի արևելք տանող երթևեկելի առանցքով՝ նպատակ ունենալով կատարել ժամանակագրական ճշգրտումներ և պարզել երթևեկելի հատվածի նախնական նիշը:

Պեղումները կընդգրկեն նաև Խալդիի տաճարի արևելյան ճակատի երկայնքը: Հնագիտական միջամտություններին զուգահեռ կուսումնասիրվեն հնավայրի պեղվող հատվածներից հայտնաբերված խեցեղենն ու գտածոները, այդ տվյալները կհամադրվեն տաճարից հյուսիս գոյություն ունեցող կառուցվածքների տարրերի հետ՝ թույլ տալով մոտենալ սյունազարդ մեծ դահլիճի թվագրման խնդրին:

Գլոբալ առումով պեղումները թույլ կտան հասկանալ, թե արդյոք կյանքն Երեբունիում շարունակվել է ուրարտական վերջին ժամանակաշրջանից մինչև աքեմենյան տիրապետություն ընկած միջակայքում: Դրանք թույլ կտան վերանայել նաև <<ապադանա>>-ի /հանդիսությունների սրահի/ թվագրությունը, որն ամենայն հավանականությամբ վերաբերում է Ք. ա. 6-րդ դարի 1-ին կեսին:

Հաշվի առնելով Երեբունի ամրոցում օգտագործված նախնական շինանյութի՝ հում աղյուսի բեկունության բարձր աստիճանը՝ արշավախմբի և <<Երեբունի>> արգելոց-թանգարանի մտահոգությունների կենտրոնում կլինի նաև նախորդ տարի պեղումներով բացված որոշ կառուցվածքների /ջրատարն իր ավազանով/ տևական պահպանության խնդիրը: Կքննարկվի նաև պեղումների այս հատվածը բաց թողնելու և հանրությանը ներկայացնելու հնարավորությունը:

Երեբունի ամրոցում 2013թ. պեղումների ձեռնարկողը <<Երեբունի>> պատմահնագիտական արգելոց-թանգարանն է: Ֆրանսիական արշավախումբը, ինչպես և 2008-2012թթ., ղեկավարում է Բրետանի հնագիտական ծառայության ղեկավար Ստեֆան Դեշամպը: Հայկական կողմի աշխատանքները այս տարի ղեկավարում է արգելոց-թանգարանի գիտահետազոտական աշխատանքների բաժնի վարիչ Աննա Ազիզյանը: Պեղումները կտևեն 1 ամիս:

<<Երեբունի>> արգելոց-թանգարանի նախաձեռնությամբ հնագիտությամբ և հնագիտական ժառանգության պահպանության խնդիրներով հետաքրքրվողների համար ֆրանսիացի մասնագետները կանցկացնեն ճանաչողական դասախոսություններ, որոնց թեմաների և ժամկետների մասին կհաղորդվի լրացուցիչ: